ԵԴ2/44286/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունվարի 2024թ. **ք.Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանս /այսուհետ՝ դատարան/, ծանոթանալով <<Անսերվ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով <<Անսերվ>> ՍՊ ընկերությանը 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և <<Անսերվ>> ՍՊ ընկերության հետ 7-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Անսերվ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արև Հարությունյանը 2023թ. դեկտեմբերի 20-ին փոստային ծառայության միջոցով հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝

1. թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով <<Անսերվ>> ՍՊ ընկերությանը 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և
2. <<Անսերվ>> ՍՊ ընկերության հետ 7-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որը դատարան է ստացվել 2023թ. դեկտեմբերի 22-ին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանի աշխատակազմին է հանձնվել 2023թ. դեկտեմբերի 25-ին:

Դատարանի 2023թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

<<Անսերվ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արև Հարությունյանը հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի 2023թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ նշված թերությունները վերացնելուց հետո փոստային ծառայության միջոցով հայցադիմումը կրկին է ներկայացրել դատարան, որը դատարան է ստացվել 2024թ. հունվարի 24-ին:

Հայցադիմումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանի աշխատակազմին է հանձնվել 2023թ. հունվարի 25-ին:

Հայցադիմումը ներկայացված է դատարանի 2023թ. դեկտեմբերի 28-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ նշված թերությունները վերացված, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125, 199-200 և 361 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Անսերվ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով <<Անսերվ>> ՍՊ ընկերությանը 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և <<Անսերվ>> ՍՊ ընկերության հետ 7-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YESOYAN YEREM 2711740048 Date: 2024.01.29 14:50:38 AMT **ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ**